

9-րդ դասարանի հայոց լեզվի ավարտական քննության ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի հայոց լեզվի ավարտական քննությունը անցկացվում է թեսուով:

Թեստը բաղկացած է որևէ տեքստից և դրա շուրջ տրվող 36 առաջադրանքներից:

Տեքստը կարող է լինել գեղարվեստական կամ գիտահանրամատչելի: Գեղարվեստական տեքստը ընդգրկում է 300-400 բառ, գիտահանրամատչելի տեքստը՝ 200-300:

Առաջադրանքներից 20-ը ընտրովի պատասխանով են (տրվում են 4 տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ), 15-ը՝ կարճ պատասխանով՝ տրված հարցի պատասխանի ինքնուրույն դուրսբերմամբ, 1-ը՝ շարադրանք:

Ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Թեստի առավելագույն միավորը 39 է, որը բերվում է գնահատման 20 միավորանց համակարգի՝ համապատասխան սանդղակի միջոցով:

Թեստի առաջադրանքները լուծելու և պատասխանների ձևաբութը լրացնելու համար հատկացվում է 120 րոպե:

Հարադրանքի գնահատման չափանիշները

Հարադրանքը պետք է պարունակի 40-60 բառ:

Հարադրանքը գնահատվում է առավելագույնը 4 միավորով տրված հարցի պատասխանի (կարծիքի հայտնման, կերպարի բնութագրման, իրավիճակի վերլուծության և այլն) լիարժեք և գրագետ շարադրման դեպքում:

Հարադրանքը գնահատվում է երկու բաղադրիչներով՝ 1. բովանդակություն (ընթերցածի վերաբերյալ արտահայտվելու կարողություն և մտքերը որպես կապակցված խոսք ձևակերպելու հնտություն), 2. շարադրանքի որակ (լեզվական գրագիտության նորմերի պահպանում):

1-ին և 2-րդ բաղադրիչներից յուրաքանչյուրի համար տրվում է 2-ական միավոր:

Առանց 2-րդ բաղադրիչը հաշվի առնելու՝ շարադրանքը գնահատվում է 0, եթե շարադրանքը՝

- *տեքստի բովանդակության հետ առնչություն չունի,*
- *տրված տեքստի կամ նրա մի հատվածի սուլական վերարտադրությունն է,*
- *պարունակում է 40-ից պակաս բառ:*

Յուրաքանչյուր բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորից միավորներ են հանվում՝ ըստ ստորև ներկայացված սկզբունքների:

Բովանդակություն (առավելագույն միավորը՝ 2)

Հարադրանքի բովանդակության (կարծիքի հայտնման, կերպարի բնութագրման, իրավիճակի վերլուծության և այլն) առումով աշակերտը ազատ է: Այս բաղադրիչի գնահատումը չի ենթադրում աշակերտի շարադրանքը բովանդակության և ստուգողի աշխարհայացքի համընկնում: Սակայն արտահայտված մտքերը չեն կարող հակասել տրված տեքստի բովանդակությանը կամ չբխել նրամից:

Առավելագույն միավոր ստանալու համար աշակերտը պետք է ոչ միայն կարծիք հայտնի, այլև հիմնավորի այն: Հիմնավորումները նույնական չեն կարող հակասել տրված տեքստի բովանդակությանը կամ չբխել նրանից:

Տրվելիք միավորից մեկական միավորներ են հանվում հետևյալ դեպքերում՝

- միևնույն մտքի մեկից ավելի կրկնություն,
- հայտնած կարծիքի և դրա հիմնավորման անհամապատասխանություն,

¹ Որպես շարադրանքի բառաքանակ չի հաշվարկվում տեքստից բառացիորեն մեջքերված նախադասությունների բառաքանակը:

- կատարված դիտարկման կամ դրա հիմնավորման՝ տեքստի հետ հակասության կամ տեքստից չըխելու երևույթ,
- իրար հաջորդող նախադասությունների միջև տրամաբանական կապի խախոռում,
- նախադասության հատվածների միջև տրամաբանական կապի բացակայության,
- ավելորդ, հարցադրման հետ չառնչվող, դիտարկում չհանդիսացող կամ որպես այդպիսին չմատուցվող կամ հիմնավորմանը չնպաստող մտքի առկայություն:

Շարադրանքի որակ (առավելագույն միավորը՝ 2)

Այս բաղադրիչի բաղկացուցիչներն են՝ 1. ուղղագրություն, 2. կետադրություն, 3. բառագործածություն, 4. քերականություն (խնդրառություն, համաձայնություն, շարադասություն):

Սրանցից յուրաքանչյուրից թույլ տրված յուրաքանչյուր սխալի համար հանվում է մեկական միավոր:

Միևնույն կանոնին վերաբերող սխալները չեն խմբավորվում:

Որպես մեկ սխալ են դիտվում՝

- միևնույն բառում թույլ տրված մեկից ավելի ուղղագրական սխալները,
- միևնույն բառի ուղղագրական կամ բառագործածության սխալները տվյալ բառի կրկնության դեպքում,
- նույն տեղում, համաձայն տվյալ կետադրական կանոնի, մեկից ավելի կետադրական նշանների ամբողջովին բացակայությունը կամ սխալը:

Լրացուցիչ ցուցումներ.

- 2-րդ բաղադրիչից հանվող միավորների թիվը որոշ դեպքերում կարող է գերազանցել 2-ը, այսինքն՝ այս բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորը: Այդ դեպքում 2-րդ բաղադրիչը զնահատվում է 0, սակայն 1-ին բաղադրիչին տրվելիք միավորը մնում է անխախտ. 2-րդ բաղադրիչի սխալների համար 1-ին բաղադրիչին տրվելիք միավորներից միավոր չի հանվում:
- 1-ին բաղադրիչը համարվում է գերակա: Այս բաղադրիչին տրվող միավորները զումարվում են թեստի այլ առաջադրանքներից հավաքած միավորներին անգամ այն դեպքում, եթե 2-րդ բաղադրիչից աշակերտը որևէ միավոր չի հավաքում:
- Բացառիկ ինքնատիպ մտքի կամ հոգեբանական նույր դիտարկման համար տրվելիք միավորներին կարող է ավելացվել ևս 1 միավոր, եթե տրվելիք միավորների թիվը չի գերազանցում 4-ը:
- Շարադրանքում 3 ջնջում կամ ուղղում ունենալու դեպքում հանվում է 1 միավոր, 3-ից ավելի յուրաքանչյուր ուղղում կամ ջնջման համար հանվում է մեկական միավոր:

Գնահատման սանդղակ

Միավորներ	Գնահատական	Միավորներ	Գնահատական
0-1	1	15-16	11
2	2	17-18-19	12
3	3	20-21-22	13
4	4	23-24-25	14
5	5	26-27-28	15
6	6	29-30-31	16
7-8	7	32-33-34	17
9-10	8	35-36	18
11-12	9	37-38	19
13-14	10	39	20

Թեստի նմուշ

Կարդա՛ տեքստը և կատարի՛ առաջադրանքները:

I

1. Ուրախ կլանչոցով շունը նետվեց դեպի կածան: 2. Մի պահ ես էլ ուրախացա ու վազեցի: 3. Խաշամը խշխշում էր խլացնելու չափ ուժքին ու չոր: 4. Այդ խշխշոցն էր, երբ վագում էի. իմ ականջներում միայն այդ խշխշոցն էր: 5. Խաշամը հասնում էր ծնկներիս: 6. Երբ կանգ էի առնում, լուր լրություն էր. այդ լրության ու լրւսի մեջ, հազիվ լսելի ավավարվ, օրորվում էին թափվող տերևները: 7. Աև մոշահավը կշկոցով թռավ իմ ոտքերի տակից, և դարձյալ խոր լրություն էր: 8. Ինձ թվում էր, թե ես լսում եմ անտառի խաղաղ շնչառությունը:

II

1. Ես հետ նայեցի: 2. Իմ հորեղբայրը ծնկել էր աղբյուրի մոտ և ինչ-որ բան էր անում: 3. Մի քիչ էլ խորանալով անտառի մեջ՝ ես դարձյալ հետ նայեցի: 4. Իմաձ թվաց, թե հորեղբայրն արդեն գնացել է, բայց չէր գնացել, դեռ կռացած էր աղբյուրի վրա և դժվար էր նկատվում, քանի որ հողագույն էին և ճանապարհը, և նրա հագուստը: 5. Ես նստեցի ծառի հետևը և որպեսզի ինքս ինձ խարեմ, թե որեւէ բան եմ անում, բացեցի սխրագործությունների մասին գիրքը:

III

1. Գիրքը, սակայն, ես չի կարդում. գրքի վրա կռացած՝ ես սպասում էի, թե իմ հորեղբայրը երբ է հեռանալու վերադարձի ճանապարհից: 2. Նա իիմա նստել էր աղբյուրի մոտ, ծխում էր և ինչպես ինձ էր թվում, նայում էր անտառի մեջ ինձ: 3. «Օրինակ՝ ինչո՞ւ ես էղպես պարապ նստել,- մտածեցի ես,- խոզ գտնելը ձեր գործն է, զիրք կարդալը՝ իմ. ես ահա կարդում եմ իմ զիրքը, իսկ դուք պարապ նստել եք»: 4. Եվ որպեսզի ինքս ինձ ավելի խարեմ, ես ականջներս փակեցի մատներով ու նայեցի միայն գրքին: 5. Իբր թե կարդում եմ, իբր թե միայն կարդում եմ:

IV

1. Հեռավոր թույլ խշխշոց էր լսվում: 2. Ես հայացքս գրքից բարձրացրի և ականջներս բացեցի, խշխշոցը շատ ուժեղ էր և շատ մոտիկ: 3. Բայց ես չհասցրի վախենալ, որովհետև նույն պահին էլ տեսա մեր շանը: 4. Նա թափով կպավ ինձ, ցատկեց, նորից ցատկեց, վնասաց ու կանչեց դեպի Պարզ բացատ: 5. Որպեսզի նա նորից չկլանչի ու խշխացնի, ես իմ հացի կեսը տվեցի նրան:

(Հ. Մաթևոսյան, «Հացը»)

1 Տեքստի I հատվածում դեպքը ո՞ր եղանակի բայաձևերի միջոցով է պատմվում:

- 1) սահմանական
- 2) լրձական
- 3) ենթադրական
- 4) հարկադրական

2 Ո՞ր միտքն է հակասում տեքստի բովանդակությանը:

- 1) Գործողությունները տեղի են ունենում աշնանային անտառում:
- 2) Տղան կարծում էր, թե հորեղբայրը հեռվից իրեն էր հետևում:
- 3) Տղան մեծ հետաքրքրությամբ կարդում է քաջազործությունների մասին գիրքը:
- 4) Հորեղբայրը դժվար էր նկատվում, որովհետև նրա հագուստի գույները ծովագույն էին շրջապատի գույներին:

3 Տեքստում ո՞ր ձայնի մասին խոսք չկա:

- 1) շան վնասոց
- 2) մոշահավի կշկոց
- 3) աղբյուրի ջրի քչքոց
- 4) չոր տերևների խշխշոց

4 Ո՞ր բառում հնչյունափոխություն չկա:

- 1) խլացնել
- 2) շնչառություն
- 3) աղբյուր
- 4) լուրջյուն

5 Ո՞ր բառն է սխալ գրված:

- 1) հայացք
- 2) լվածք
- 3) գնացք
- 4) նայվածք

6 Ո՞ր բառն է սխալ գրված:

- 1) որևէ
- 2) որևիցէ
- 3) միջօրէ
- 4) մանրէ

7 Սխրագործություն բառի վանկատման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- 1) սըխ-րա-գոր-ծու-թյուն
- 2) սըխր-ա-գոր-ծու-թյուն
- 3) սըխ-րա-գործ-ություն
- 4) սըխ-րա-գործ-ութ-յուն

8 Տրված բառերից ո՞րն ածանցավոր չէ:

- 1) կլանչոց
- 2) լսելի
- 3) լուսավուն
- 4) խաղաղ

9 Ո՞ր դեպքում է գոյականի հոլովը սխալ նշված:

- 1) հորեղբայրը - ուղական
- 2) ճանապարհից - բացառական
- 3) մատներով - գործիական
- 4) անտառի – ներգոյական

10 Ո՞ր բառն է ենթարկվում արտաքին հոլովման:

- 1) հորեղբայր
- 2) լուսավուն
- 3) շուն
- 4) ծունկ

11 Ո՞ր բայաձևն է ապառնի ժամանակ ցույց տալիս:

- 1) լսվում էր
- 2) բարձրացրի
- 3) կպավ
- 4) չկլանչի

12 Ո՞ր բայաձևը բայածանց ունի:

- 1) կպավ
- 2) կլանչի
- 3) կանչեց
- 4) ցատկեց

13 Ո՞ր կապակցության մեջ կապ չկա:

- 1) դեպի կածան
- 2) խլացնելու չափ
- 3) այդ խշխշոցը
- 4) լույսի մեջ

14 Նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

Ես նստեցի ծառի հետեւ և, որպեսզի ինքս ինձ խարեւմ, թե որևէ բան եմ անում, բացեցի սիրազդությունների մասին զիրքը:

- 1) **նստեցի** – Ի դեմքի բայ, անցյալ կատարյալ
- 2) **խարեւմ** – Ի դեմքի բայ, ըղձական ապառնի
- 3) **որևէ** – ածական, դրական աստիճան
- 4) **որպեսզի** – ստորադասական շաղկաս

15 Ո՞ր նախադասությունն է կազմությամբ պարզ:

- 1) I. 2
- 2) II. 2
- 3) II. 3
- 4) III. 5

16 Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:

- 1) I. 8
- 2) II. 4
- 3) III. 4
- 4) IV. 2

17 III հատվածի ո՞ր նախադասության մեջ ենթակայի գեղչում **չկա:**

- 1) 1-ին
- 2) 2-րդ
- 3) 3-րդ
- 4) 4-րդ

18 III հատվածի ո՞ր նախադասության մեջ ստորոգյալի գեղչում կա:

- 1) 1-ին
- 2) 2-րդ
- 3) 3-րդ
- 4) 4-րդ

19 Ո՞րը որոշիչ-որոշյալի կապակցություն չէ:

- 1) ուրախ կլանչոց
- 2) լսելի սվավալ
- 3) խաղաղ շնչառություն
- 4) քափվող տերևներ

20 Նախադասության անդամներից որի՞ շարահյուսական վերլուծության մեջ սխալ կա:

Ես հայացքս զրքից քարձրացրի և ականջներս քացեցի, իշխացը շատ ուժեղ էր և շատ մոտիկ:

- 1) **հայացքս** – ուղիղ խնդիր
- 2) **ականջներս** – ենթակա
- 3) **զրքից** – անջատման անուղղակի խնդիր
- 4) **ուժեղ էր** – բաղադրյալ ստորոգյալ

21 I հասվածից դուրս գրիր **արահետ** բառի հոմանիշը:

Պատասխան՝ -----

22 Գրիր **ծխում** եթ բայաձևի անորոշ դերբայը:

Պատասխան՝ -----

23 Տեքստի n^oր բառն է նշանակում «Ճառերից թափված աշնան տերևները»:

Պատասխան՝ -----

24 I հասվածից դուրս գրիր այն բառը, որը փոխաբերաբար նշանակում է «ոչնչով չխանգարվող, անվլորով», նաև «ուևական»:

Պատասխան՝ -----

25 I հասվածից դուրս գրիր **նորից** բառի հոմանիշը:

Պատասխան՝ -----

26 I հասվածից դուրս գրիր **արմատ+հոդակապ+արմատ** կազմությամբ բառը:

Պատասխան՝ -----

27 I հասվածի 7-րդ նախադասության մեջ և-ից առաջ ինչո՞ւ է ստորակետ դրվել:

Պատասխան՝ -----

28 II հասվածից դուրս գրիր **արմատ+արմատ** կազմությամբ բառը (առանց հոդակապի):

Պատասխան՝ -----

29 II հասվածից դուրս գրիր դիմորոշ հոդով դերանունը:

Պատասխան՝ -----

30 III հասվածից դուրս գրիր խոսակցական բառապաշտին պատկանող բառը:

Պատասխան՝ -----

- 31** IV հատվածից դուքս գրիր երկու բառ, որոնք հոմանիշ են:

Պատոսախամ՝-----

- 32** IV հատվածից դուքս գրիր երկնչել բայի հոմանիշը:

Պատոսախամ՝-----

- 33** IV հատվածից դուքս գրիր երկու բառ, որոնք հականիշ են:

Պատոսախամ՝-----

- 34** Գրիր բարձրացնել բայի հրամայական եղանակի եզակիի ձևը:

Պատոսախամ՝-----

- 35** Լույս արմատով մեկ բարդ բան կազմիր:

Պատոսախամ՝-----

- 36** Ի՞նչ կարծիք կազմեցիր տղայի մասին, ինչո՞ւ: *Մորելողարադրի՛ր 40-60 բառով:*

Պատասխանների ձևաթուղթ**Հայոց լեզու**

ազգանուն

անուն

հայրանուն

--	--	--	--	--	--	--	--

անձնական համար

Թեստ № 1 2 3 4 **Ըստրովի պատասխանով առաջադրանքներ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1	<input type="checkbox"/>																		
2	<input type="checkbox"/>																		
3	<input type="checkbox"/>																		
4	<input type="checkbox"/>																		

Միաւ ճշված
պատասխանը
փոխելու տեղը

1	<input type="checkbox"/>
2	<input type="checkbox"/>
3	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>

Կարճ պատասխանով առաջադրանքներ

21	<input type="text"/>	28	<input type="text"/>
22	<input type="text"/>	29	<input type="text"/>
23	<input type="text"/>	30	<input type="text"/>
24	<input type="text"/>	31	<input type="text"/>
25	<input type="text"/>	32	<input type="text"/>
26	<input type="text"/>	33	<input type="text"/>
27	<input type="text"/>	34	<input type="text"/>
35	<input type="text"/>		

Լրացնում է ստուգողը

21	<input type="checkbox"/>	28	<input type="checkbox"/>
22	<input type="checkbox"/>	29	<input type="checkbox"/>
23	<input type="checkbox"/>	30	<input type="checkbox"/>
24	<input type="checkbox"/>	31	<input type="checkbox"/>
25	<input type="checkbox"/>	32	<input type="checkbox"/>
26	<input type="checkbox"/>	33	<input type="checkbox"/>
27	<input type="checkbox"/>	34	<input type="checkbox"/>
35	<input type="checkbox"/>		

36 Բաղադրիչ I

1	<input type="checkbox"/>	2	<input type="checkbox"/>
---	--------------------------	---	--------------------------

Բաղադրիչ II

1	<input type="checkbox"/>	2	<input type="checkbox"/>
---	--------------------------	---	--------------------------

36